ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Մակիչ Հովհաննիսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարարության արտաքին կապերի վարչության Եվրասիական տնտեսական միության բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ-Պետերբուրգ)/ 2018թ. օգոստոսի 15-17-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցել Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվեցին՝

   ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայում /այսուհետ շուկա/ միջպետական հատույթներում էլեկտրաէներգիայի առևտրի իրականացմանն առնչվող հարցեր,

   շուկայում էլեկտրաէներգիայի կենտրոնացված և օր առաջ առևտրի իրականացման ժամային գոտիներին վերաբերող հարցեր,

   շուկայում առևտրին մասնակցության գործարքների իրականացման և գների ձևավորման հարցեր,

   էլեկտրաէներգիայի փոխանցումների շեղումների և դրանց վերահսկմանը վերաբերող հարցեր,

   էներգոհամակարգերի զուգագեռ աշխատանքների շրջանակներում տեխնիկական հնարավորությունների և թույլատրելի շեղումների խնդիրները,

   էլեկտրոնային հարթակում ազատ երկկողմ, օր առաջ և երկարաժամկետ պայմանագրերի միջոցով ներկայացվող հայտերի հերթականությանը և էլեկտրոնային հարթակում դրանց գրանցման հերթականությանը վերաբերող հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպում է տեղի ունեցել Սանկտ-Պետերբուրգի բորսայի ներկայացուցչի հետ, որի ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական և գազի շուկաների շրջանակներում էլեկտրոնային հարթակում իրականացվող առևտրին ՀՀ-ի մասնակցության տեխնիկական հնարավորությունները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Ենթակոմիտեի նիստին անդամները որոշեցին, որ՝

   շուկայում էլեկտրաէներգիայի առևտուրն իրականացվելու է անդամ-պետությունների կամ անդամ պետության և երրորդ երկրի միջև միջպետական հատույթներում,

կենտրոնացված և օր առաջ առևտրի սկիզբը և վերջը որոշվելու է Մոսկվայի, իսկ դրանց ցուցանիշների վերհանումը՝ միջեվրոպական ժամերով,
շուկայում կենտրոնացված առևտրի շրջանակներում երկարաժամկետ պայմանագրով իրականացվող գործարքի գինը ոշոշվելու է նախապես ներկայացված հայտի հիման վրա,
ներդրվելու է էլեկտրաէներգիայի մատակարարման ժամկետների սահմանում գաղափարը և սահմանված ժամկետները խախտելու դեպքում կոնկրետ պայմանագրով առևտուր չի իրականացվելու,
էլեկտրոնային առևտրի դեպքում ներդրվելու է «Մեկ պատուհան»-ի տարբերակը, որը կարող է հեշտացնել գործարքների իրականացումը,
վթարային կամ մատակարարի մեղքով առաջացած էլեկտրաէներգիայի մատակարարման հնարավոր շեղումների դեպքում մշակվելու է հնարավոր փոխօգնության տարբերակ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նիստի արդյունքներն ամփոփելով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը կկազմի և կներկայացնի նիստի արձանագրությունը, որի համաձայն էլ անդամ-պետությունները կներկայացնեն իրենց դիրքորոշումները և առաջարկությունները:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաքին կապերի վարչության Եվրասիական տնտեսական միության բաժնի պետ **Մ. Հովհաննիսյան**

20. 08. 2018թ.